600.0237.24.08.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2016 թվականի №237Ա

ք. Երևան

«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի մայիսի 22-ի №170Ա որոշմամբ «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Որոտան-7» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0497 լիցենզիան (այսուհետ՝ №0497 լիցենզիա)՝ 15 տարի գործողության ժամկետով,

բ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառման ավտոմատ համակարգի միջոցով իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2016 թվականի մայիս և հունիս ամիսներին գերազանցվել է Կայանի դրվածքային հզորությունը, ինչից ելնելով սույն թվականի հուլիսի 19-ին Կայանում իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ №0497 լիցենզիայի պայմաններում ամրագրված երեք հիդրոագրեգատների փոխարեն Կայանում փաստացի տեղակայված են վեցը, իսկ գոյություն ունեցող ճնշումային խողովակաշարին զուգահեռ տեղակայված է ևս մեկ խողովակաշար,

գ) սույն թվականի հուլիսի 25-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ վերջինիս կողմից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզավորված գործունեությունը №0497 լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2016 թվականի հուլիսի 29-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տված խախտումը, հայտնելով, որ գետի

վարարման հետևանքով օգտագործվել են Կայանում որպես պահուստային ծառայելու նպատակով լրացուցիչ տեղակայված երեք հիդրոագրեգատները, որի հետևանքով էլ գերազանցվել է Կայանի հաշվարկային հզորությունը,

ե) №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությունն իրականացնում է №0497 լիցենզիայի հավելվածում նշված հիմնական սարքավորումներով (երեքական հիդրոտուրբին և գեներատոր), որոնց հաշվարկային հզորությունը կազմում է 730կՎտ, իսկ 16-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին, նույն պայմանների 28-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել լիցենզիայի պայմանների խախտումների,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ փաստացի տեղակայված հիդրոագրեգատների քանակը չի համապատասխանում №0497 լիցենզիայի պայմաններում ամրագրվածին, որի արդյունքում խախտվել է հաշվարկային հզորությունը և Ընկերությունը այդ հանգամանքի մասին անմիջապես չի հայտնել Հանձնաժողովին՝ խախտելով №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ, 16-րդ և 28-րդ կետերը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «բ» ենթակետը, 6-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. №0497 լիցենզիայի պայմանների 6-րդ, 16-րդ և 28-րդ կետերի խախտման համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն դրամ գումարի չափով:

2. Ընկերությանը՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից Ընկերության գործունեությունը համապատասխանեցնել №0497 լիցենզիայի պայմաններին,

3) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.

ա. դիմել Հանձնաժողով՝ Կայանի վերակառուցման համար համաձայնություն ստանալու և №0497 լիցենզիայի պայմաններում փոփոխություն կատարելու համար,

բ. սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
24 օգոստոսի 2016թ.
ժամը 16[00]